ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 9-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինաւորացն»։ Երևանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Քարոզի բնաբանն էր «Աստ արասջիք զյիշատակ Սրբոյն Սարգսի զօրավարին, որ է տուն երկնից և ճանապարհ արքայութեան»։

* *
*

Փետրվարի 9-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում բանախոսեց Ճեմարանի դասախոս Գրիգոր Դյուլյանը, նյութ ունենալով Ժաննա դ'Արքի կյանքն ու գործունեությունը։

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

* *
*

Փետրվարի 10-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։ Քարոզի բնաբանն էր «Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Փետրվարի 10-ին, կիրակի, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը։ Քարոզի բնաբանն էր «Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնեից»։

* *
*

Փետրվարի 16-ին, շաբաթ երեկոյան, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում բանախոսեց Ճեմարանի դասախոս Պարգև Շահբազյանը «Մխիթարյանները և հայ մշակույթը» թեմայի շուրջ։

Դասախոսությունը լսվեց հարաճուն ուշադրությամբ։

* *
*

Փետրվարի 17-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը «Լուսով քով Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Փետրվարի 22-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, զումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը։

* *
*

Փետրվարի 25-ին, երկուշաբթի, Մոսկվայից ԱՄՆ մեկնեց Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատգամավորությունը, ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով։

Պատգամավորության կազմում էր նաև Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, որպես ներկայացուցիչ Հայոց Եկեղեցու։

Ամսի 22-ին Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը, ժամանակավորապես փոխարինելու Տ. Պարգև եպիսկոպոսին։

* *
*

Փետրվարի 24-ին, կիրակի, Բուն բարեկենդան։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Ապա ուրեմն, իւրաքանչիւր ոք ի մէնջ, ընդ անձին համարս տացէ Աստուծոյ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։